**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-25/104**

ք. Երևան «17» 11 2025 թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը ի դեմս Ռեկտոր՝ Հ. Ջաքոյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «iMotions» LLC-ն, ի դեմս տնօրեն Պ. Հարցբեկի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 11,270,000,00 (տասնմեկ միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ, վաճառողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող:[29]Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան հանձնման-ընդունման արձանագրության երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի վերջին աշխատանքային օրը:

*«Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից . բանկին վճարման հանձնարարական տալուօրվան նախորդող օրը:

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանիցԸնդ որում,

Վաճառողը համաձայնագիրը կնքում, Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան»
հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«ԱՄԻՕ» բանկ
Հ/Հ 1150009677587528
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝------------------------------- Հ. Ջաքոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«iMotions» LLC
Քրիստեն Բերնիկովս Գադ 6, 4-րդ հարկ
Կոպենհագեն, Դանիա 1105,
Danske Bank
ՀՀ 4316108369
ՀՎՀՀ DK33504004

Գործադիր տնօրեն------------------------------ Պ. Հարցբեկ
(ստորագրություն)
Կ.Տ.

iMotions A/S
Kristen Bernikows Gade 6, 4th
1105 Copenhagen K
Denmark
Phone: +45 71 998 098

Հավելված N 1
«17» 11 2025 թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-25/104 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Միավոր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | Մատակարարման | | |
| | | | | | | | | | Հասցեն | Ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 1 | 33141174/503 | Բժշկական սարքերի հավաքածուներ | iMotions, iMotions A/S | **Սարքավորումներ**<br>**1. Աչքերի հետագծման խելացի տեսախցիկի համակարգ – 1 հատ**<br>Աչքերի հետագծման խելացի տեսախցիկի համակարգը պետք է ներառի այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են բարձր լուծաչափով (high resolution) տեսախցիկները, ինֆրակարմիր լուսատուներ և իրական ժամանակում հետևելու ալգորիթմներ: Դրանց հիմնական տեխնիկական հատկանիշներն են.<br>1. Տեսախցիկներ. պետք է ունենան բարձր լուծաչափով (HD) տեսախցիկներ, որոնք ճշգրիտ ֆիքսում են աչքերի շարժումները:<br>2. Ինֆրակարմիր լուսավորություն. Պետք է ներառի IR լուսավորություն օգտագործման հնարավորություն՝ տարբեր լուսավորության պայմաններում աչքի տեսանելիությունը բարձրացնելու համար՝ նվազագույնի հասցնելով արտացոլումները և շեղումները: | հատ | 11270000 | 11270000 | 1 | ՀՀ, ք.Երևան, Տերյան 74 | 1 | Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև պայմանագրին ուժի մեջ մտնելուց |

<table>
<tr>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td>3. Ծրագրային ապահովման ալգորիթմներ. պետք է հատուկ ալգորիթմներով աշխատող ծրագրերի միջոցով հնարավորություն ունենա իրականացնել հայացքի գնահատում, աչքի բիբի հայտնաբերման և թարթման ճանաչման համար:<br>4. Միացում. Պետք է համագործակցի այլ համակարգերի հետ USB-ի, Bluetooth-ի կամ Wi-Fi-ի միջոցով տվյալների փոխանցման և ավելի լայն հավելվածներում ինտեգրվելու համար:<br>5. Հավելվածներ. Պետք է հնարավոր լինի օգտագործումը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հոգեբանությունը, մարքեթինգային հետազոտությունը և մարդ-համակարգիչ փոխազդեցությունը:<br>Աչքերի հետագծման խելացի տեսախցիկը պետք է լինի կոմպակտ չափերի, համակարգչային էկրանի վրա հեշտությամբ տեղակայվելու համար (մինչև 24 դույմ):<br><br>Տեխնիկական պայմաններ
<table>
<tr><td>Արձագանքման հաճախականությունը</td><td>60 Հց ±5%</td></tr>
<tr><td>“Տեսախցիկ – աչք” օպտիմալ հեռավորություն</td><td>առնվազն 50-80 սմ</td></tr>
<tr><td>Գլխադիրքի տեղաշարժ (գլխի շարժման ազատություն)</td><td>35 x 30 սմ, 65 սմ հեռավորության վրա (±5%)</td></tr>
<tr><td>Գլխադիրքի հետևման ճշգրտություն</td><td>ոչ պակաս 0,5 աստ զգայունություն</td></tr>
</table>
</td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td>հետո և մատակարարումն իրականացվելու է 70 օրացուցային օրվա ընթացքում:</td>
</tr>
</table>

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Էկրանի առավելագույն չափը | 24" (16:9 կողմի հարաբերակցություն) | | | | | | | |
| | | | | Սարքի չափը, ոչ ավել | 280 x 20 x 40 մմ (երկարություն, բարձրություն, լայնություն) | | | | | | | |
| | | | | Քաշը | 145 գ, +/-5% | | | | | | | |
| | | | | Ելքագրվող տվյալներ | Հայացքի սևեռում, բիբի տրամագիծ, ժամանակի գրանցում Բոլոր ելքերը որպես բինոկուլյար տվյալներ՝ պետք է կապված լինեն որակի ցուցնիչով | | | | | | | |
| | | | | Վերականգնման ժամանակը (թարթել/հայացք) | 1 կադր (անմիջապես) | | | | | | | |
| | | | | Ամրացման-տեղակայման տեսակը | Էկրանի վրա (մոնտաժային տակդիրով) | | | | | | | |
| | | | | Արձագանքի ուշացման տևողությունը | 25 ms ±5% տեսախցիկի ազդեցությունից | | | | | | | |
| | | | | Աչքին հետևելու սկզբունքը | Մուգ բիբի (աչք) և եղջերաթաղանթի արտացոլում | | | | | | | |
| | | | | Գործարկման ուղեցույց՝ | Հեռակառավարման և ծրագրավորման ուղեցույց՝ ինտեգրումներին աջակցելու համար | | | | | | | |
| | | | | Մալուխի երկարությունները, ոչ պակաս | 2 մետր | | | | | | | |
| | | | | Տեսախցիկի ինտերֆեյս | USB 3.0 | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Օպերացիոն համակարգի համատեղելիությունը — Windows 11<br><br>**2. Մաշկի գալվանական արձագանքի սարք-տվիչ - 1 հատ**<br><br>Մաշկի գալվանական արձագանքի (GSR) սարքը նախատեսված է իրական ժամանակում կենսահետադարձ կապի համար և պետք է վերահսկի մաշկի հաղորդունակությունը երկու էլեկտրոդների միջև (*էլեկտրոդները պետք է լինեն վերօգտագործվող*), որոնք միացվում են մի ձեռքի երկու մատներին, առաջացնելով քրտինքի խցուկների ակտիվացում՝ ավելացնելով մաշկի խոնավությունը և թույլ տալով, որ հոսանքն ավելի հեշտ հաղորդակցվի՝ փոխելով դրական և բացասական իոնների հավասարակշռությունը արտազատվող մաշկի քրտինքում (մաշկի հաղորդունակության բարձրացում): GSR միավորը պետք է չափի մաշկի էլեկտրական բնութագրերը կամ հաղորդունակությունը, ամրացվում է մատի, ականջի բլթակի կամ մարմնի վրա գտնվող այլ տեղ, պետք է չափի և գրանցի օպտիկական զարկերակ/PPG (ֆոտոպլեթիզմոգրամ) ազդանշանը և փոխակերպի այն սրտի բաբախյունի գնահատման (HR)՝ օգտագործելով ականջին ամրացման սեղմիչ կամ օպտիկական զարկերակային զոնդ:<br><br>Բոլոր ազդանշանները պետք է հնարավոր լինի չափել միաժամանակ և իրական ժամանակում: | | | | | | | |

<table>
<tr>
<td></td><td></td><td></td><td></td>
<td>Անհրաժեշտ պարագաներ:<br>• Օպտիկական զարկերակային զոնդ (մատով) - 1 հատ<br>• Օպտիկական զարկերակային սենսորներ (ականջի բլթակի համար) - 1 հատ<br>• GSR + չոր էլեկտրոդներ - 2 հատ<br>• Կենսաֆիզիկական 9" լարեր – 2 հատ<br>• Ձեռքի ժապավեն – 1 հատ<br><br>Հավելվածներ<br>Պետք է հնարավոր լինի իրականացնել և գրանցել.<br>● զգայական արձագանքման հաշվողական և ճանաչողական գործոնների հետազոտություն<br>● Սթրեսի հայտնաբերում և վերլուծություն<br>● Զգացմունքային ներգրավվածություն<br>● Հոգեբանական գրգռում (մտավոր ջանք, հուզմունք, ցնցում)<br>● Հանգստացնող թրեյնինգ և հոգեթերապիա<br>● Մարքեթինգային հետազոտություն<br><br>Տեխնիկական պայմաններ
<table>
<tr><td>Ալիքների քանակը</td><td>1 ալիք GSR (անալոգային)</td></tr>
<tr><td>Չափման միջակայք</td><td>10k-4.7MΩ (.2uS – 100uS) +/- 10%. 22k-680kΩ (1.5-45uS) +/- 3%</td></tr>
<tr><td>Հաճախականության միջակայք</td><td>DC-15,9 Հg ±5%</td></tr>
<tr><td>Ներածման պաշտպանություն</td><td>RF/EMI ֆիլտրում, ընթացիկ սահմանափակում</td></tr>
<tr><td>Մուտքագրումներ</td><td>2 հատ բժշկական կարգի 1մմ-ոց հպմանը դիմացկուն IEC/EN</td></tr>
</table>
</td>
<td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td>
</tr>
</table>

<table>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td>
<table>
<tr><td></td><td>60601-1 DIN42-802 մուտքեր</td></tr>
<tr><td>Օժանդակ մուտքագրում</td><td>2 ալիքներով անալոգային մուտք՝ 3,5 մմ-ոց 4 դիրքանի վարդակից (մուտքային լարման միջակայք՝ 0...3.0 V)</td></tr>
<tr><td>Bluetooth ադապտեր</td><td>USB 2.0 Bluetooth 4.0</td></tr>
<tr><td>Սպառման հոսանք</td><td>60 μA ±5%</td></tr>
<tr><td>Քաշը</td><td>0,5 կգ (+/-100 գ)</td></tr>
<tr><td>Չափերը</td><td>50 × 40 × 2 cm</td></tr>
<tr><td>Հիշողության կրիչ</td><td>Ինտեգրված 8 ԳԲ microSD քարտի բնիկ</td></tr>
<tr><td>Օպերացիոն համակարգի համատեղելիությու ն</td><td>Windows 11</td></tr>
</table>
<br>
Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված: Գործարանային փաթեթավորմամբ և իրենց տուփերով: Ապրանքների երաշխիքային սպասարկումը առնվազն 24 ամիս:
<br><br>
Ծրագրային ապահովում
<br>
1. Բոլոր ներկայացված սարքերը պետք է աշխատեն մեկ ծրագրային հարթակի վրա, որը նախատեսված է կենսաչափական հետազոտությունների և վարքագծային վերլուծության համար: Պետք է ապահովեն հետևյալ հիմնական հատկանիշները, գործառույթները և հավելվածները.
<br><br>
Հիմնական առանձնահատկությունները.
</td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | **Ինտեգրում կենսաչափական սենսորների հետ.** Պետք է ապահովի տարբեր կենսաչափական տվիչների, այդ թվում՝ աչքի հետագծման, դեմքի արտահայտության վերլուծության, GSR (Գալվանական մաշկի արձագանք) և ԷՄԳ (էլեկտրոմիոգրաֆիա) սարքերի աշխատանքը:<br>**Տվյալների համատեղում.** իրական ժամանակում պետք է համատեղի տարբեր տվիչներից ստացվող տվյալները՝ տրամադրելով օգտատիրոջ վարքագծի և հուզական արձագանքների համապարփակ պատկերացում:<br>**Իրական ժամանակի վերլուծություն.** պետք է ապահովի իրական ժամանակում գրանցված տվյալների վիզուալիզացիա և վերլուծություն՝ հնարավորություն տալով հետազոտողներին դիտարկել օրինաչափությունները և միտումները, երբ դրանք տեղի են ունենում:<br>**Օգտագործողի համար հարմար ինտերֆեյսի առկայություն**, որը կապահովի ծրագրի հեշտ օգտագործում, կնպաստի տվյալների կառավարմանը և հաշվետվությունների ստեղծմանը:<br>**Փորձերի ձևավորում.** Պետք է ունենա գործիքների կազմ՝ փորձերի նախագծման և հարմարեցման համար՝ հատուկ հետազոտական կարիքներին համապատասխան, ներառյալ խթանային ներկայացումը (stimulus presentation) և առաջադրանքների կառավարումը:<br>**Տվյալների արտահանում**. հավաքագրված տվյալները տարբեր ձևաչափերով (օրինակ՝ CSV, Excel և այլն) արտահանելու հնարավորության առկայություն՝ հետագա | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | վերլուծության կամ հաշվետվությունների համար:<br><br>**Պետք է ունենա հետևյալ հետազոտական ուղղություններում կիրառելու հնարավորություն.**<br>**Շուկայի հետազոտություն՝** սպառողների վարքագիծը, նախասիրությունները և հուզական արձագանքները ապրանքների կամ գովազդի նկատմամբ հասկանալու հնարավորություն:<br>**Հոգեբանական ուսումնասիրություններ**. հուզական և ճանաչողական արձագանքների ուսումնասիրության հնարավորություն վերահսկվող միջավայրում:<br>Ծրագրային միջավայրը պետք է ունենա ներկայացվող ապրանքների կամ միջերեսների (interface) հետ օգտատերերի փորձի և փոխազդեցությունների գնահատման հանարավորություն:<br>**Կրթություն և ուսուցում**. Ծրագրային միջավայրը պետք է հնարավորություն ընձեռնի կատարել ուսումնասիրություններ և վերլուծություններ կրթական միջավայրում ուսանողների ներգրավվածության և արձագանքների մասով, օրինակ, թե ինչպես են ուսանողները փոխազդում ուսումնական նյութերի հետ:<br><br>• Համակարգչի էկրանին ամրացվող ***<u>աչքի հետագծման խելացի տեսախցիկի ծրագրային մոդուլը</u>*** պետք է ֆիքսի աչքի շարժումները և վերլուծի դրանք՝ ի պատասխան էկրաններին ներկայացված տեսողական գրգռիչների (նկար, տեքստ, գովազդ, տեսահոլովակ և այլն): | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Այն պետք է ունենա հետևյալ հիմնական հատկանիշները, գործառույթները և հավելվածները<br><br>**Իրական ժամանակում աչքի հետագծում**. պետք է ապահովի իրական ժամանակում մասնակցի աչքերի շարժումների հետևելիությունը՝ հնարավորություն տալով հետազոտողներին դիտարկել, թե ինչպես են մասնակիցները փոխազդում տեսողական բովանդակության և պատկերների հետ:<br>**Բազմաթիվ տվյալային կետեր**. Պետք է հավաքագրի տարբեր չափումներ (մեծություններ), ներառյալ ֆիքսացիայի տևողությունը, հայացքի տեղաշարժի հետագիծը, ջերմային քարտեզները և բիբի լայնացումը՝ վերլուծելու համար ուշադրության և ներգրավվածության մակարդակները:<br>**Համատեղելիություն**. Ծրագրային փաթեթը պետք է ապահովի ոլորտի առաջատար արտադրողների աչքերի հետագծման խելացի տեսախցիկների սահուն և արդյունավետ աշխատանքը՝ ապահովելով սենսորների ընտրության ճկունություն:<br>**Օգտագործողի համար հարմար ինտերֆեյս**. Պետք է ունենա ինտուիտիվ վահանակ՝ փորձեր տեղադրելու, խթանները կառավարելու և տվյալները հեշտությամբ արտապատկերելու համար:<br>**Տվյալների համատեղում**. Պետք է ինտեգրի աչքի հետագծման տվյալները այլ կենսաչափական մուտքերի հետ (օրինակ՝ GSR, EMG)՝ հուզական և ճանաչողական արձագանքների համապարփակ վերլուծության համար: | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | **Փորձերի ձևավորում.** Փորձերի նախագծման և հարմարեցման համար պետք է ունենա գործիքներ, ներառյալ մասնակիցներին տարբեր խթաններ և առաջադրանքներ ներկայացնելու հնարավորությունը:<br><br>**Համակարգի պահանջներ.** Պետք է համատեղելի լինի աչքի հետագծման սարքավորման և անհրաժեշտ հաշվողական ռեսուրսների (CPU, RAM) հետ:<br><br>• ***<u>Զգայական ազդակների (affectives) համար նախատեսված ծրագրային մոդուլ.</u>*** Նշված ծրագրային միջավայրը պետք է ինտեգրի դեմքի արտահայտությունների վերլուծությունը՝ փորձերի ընթացքում զգացմունքային արձագանքների վերաբերյալ պատկերացումներ ապահովելու համար: Այն պետք է ունենա հետևյալ հիմնական հատկանիշները, գործառույթները և հավելվածները.<br><br>***Հիմնական հատկանիշները:***<br>**Դեմքի արտահայտության վերլուծություն.** Օգտագործում է արհեստական բանականությունով աշխատող ալգորիթմներ՝ իրական ժամանակում վերլուծելու դեմքի արտահայտությունները՝ բացահայտելով այնպիսի զգացմունքներ, ինչպիսիք են ուրախությունը, տխրությունը, զայրույթը, զարմանքը և զզվանքը և այլն:<br>**Իրական ժամանակում զգացմունքների հայտնաբերում.** ֆիքսում է զգացմունքային արձագանքները, երբ մասնակիցները ներգրավվում են տեսողական խթանների հետ, ինչը թույլ է տալիս անմիջապես | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պատկերացում կազմել նրանց ռեակցիաների վերաբերյալ:<br>**Համատեղելիություն**. Աշխատում է տարբեր տեսախցիկների հետ, ներառյալ ստանդարտ վեբ-տեսախցիկներն ու մասնագիտացված բարձր լուծաչափով (HD) տեսախցիկները՝ դարձնելով այն բազմակողմանի՝ հետազոտական տարբեր կարգավորումների համար:<br>**Տվյալների պատկերացում**. տրամադրում է տեսողական արձագանք գրաֆիկների և գծապատկերների միջոցով՝ ցույց տալով ժամանակի ընթացքում հուզական արձագանքների ինտենսիվությունն ու տևողությունը:<br>**Ինտեգրում այլ կենսաչափական տվյալների հետ**. համատեղում է դեմքի արտահայտությունների տվյալները այլ կենսաչափական տվյալների հետ (օրինակ՝ աչքի հետագծումը և GSR)՝ մասնակիցների ներգրավվածության և հուզական վիճակների ամբողջական ըմբռնման համար:<br>**Օգտագործողի համար հարմար ինտերֆեյս.** պարզեցնում է փորձերի տեղադրման, խթանների կազմաձևման և տվյալների հավաքագրման կառավարումը ինտուիտիվ վահանակի միջոցով:<br>**Կարգավորելի չափումներ**. Հետազոտողները կարող են սահմանել հատուկ էմոցիոնալ չափումներ, որոնց վրա պետք է կենտրոնանալ՝ հարմարեցնելով վերլուծությունները իրենց ուսումնասիրության կարիքներին:<br><br>***Հավելվածներ***<br>**Շուկայական հետազոտություն**. վերլուծել սպառողների հուզական արձագանքները | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | գովազդներին, ապրանքներին կամ ապրանքանիշի հաղորդագրություններին:<br>**Օգտատիրոջ փորձառության (UX) հետազոտություն**. վեբկայքերի, հավելվածների և ինտերֆեյսերի հետ հուզական ներգրավվածության գնահատում՝ դիզայնի բարելավման համար:<br>**Հոգեբանական ուսումնասիրություններ.** Զգացմունքների և ճանաչողական գործընթացների միջև կապի ուսումնասիրություն տարբեր համատեքստերում:<br>**Մեդիա և ժամանց**. Հասկանալ լսարանի արձագանքը ֆիլմերին, գովազդներին, խաղերին կամ այլ մեդիա բովանդակությանը:<br><br>• ***<u>Մաշկի գալվանական արձագանքի (GSR)</u>*** ծրագրային մոդուլը պետք է կարողանա չափել էմոցիոնալ գրգռվածության հետ կապված ֆիզիոլոգիական արձագանքները՝ ֆիքսելով մաշկի հաղորդունակության փոփոխությունները: Այն պետք է ունենա հետևյալ հիմնական հատկանիշները, գործառույթները և հավելվածները.<br><br>**Հիմնական հատկանիշները:**<br>**Չափում իրական ժամանակում**. ապահովում է մաշկի հաղորդունակության շարունակական մոնիտորինգ՝ թույլ տալով հետազոտողներին իրական ժամանակում դիտարկել մաշկի ֆիզիոլոգիական գրգռումը:<br>**Ինտեգրում այլ կենսաչափական տվյալների հետ**. անխափան աշխատում է այլ ծրագրային մոդուլների հետ (օրինակ՝ | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | աչքի հետագծում, դեմքի արտահայտությունների վերլուծություն և ԷՄԳ)՝ տրամադրելու էմոցիոնալ և ճանաչողական արձագանքների համապարփակ պատկերացում:<br>**Օգտագործողի համար հարմար ինտերֆեյս.** ինտուիտիվ վահանակ՝ հեշտ տեղադրման, տվյալների հավաքման և վերլուծության համար, որը թույլ է տալիս հետազոտողներին կենտրոնանալ իրենց փորձերի վրա՝ առանց տեխնիկական շեղումների:<br>**Տվյալների պատկերացում.** առաջարկում է իրական ժամանակի գրաֆիկներ և GSR տվյալների պատկերացումներ, որոնք օգնում են բացահայտել ֆիզիոլոգիական արձագանքների օրինաչափությունները և գագաթները:<br>**Կարգավորելի չափումներ.** Հետազոտողները կարող են սահմանել հատուկ չափումներ և դրանց շեմերը՝ գրգռման մակարդակների համար՝ հարմարեցնելով վերլուծությունները իրենց ուսումնասիրության կարիքներին:<br>**Փորձերի նախագծման գործիքներ.** փորձեր ստեղծելու և կառավարելու առանձնահատկությունների հնարավորություն, ներառյալ խթանային ներկայացումը (stimulus presentation) և առաջադրանքների կազմածևումը:<br><br>• ***<u>Ձայնի վերլուծության ծրագրային մոդուլը</u>*** պետք է, ապահովի հուզական և հոգեբանական վիճակները ձայնային բնութագրերի միջոցով վերլուծելու հնարավորություններ՝ օգտագործելով համապատասխան տեխնոլոգիաներ: Այն պետք է ունենա հետևյալ հիմնական | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հատկանիշները, գործառույթները և հավելվածները.<br><br>***Հիմնական հատկանիշները*:**<br>**Զգացմունքային ձայնի վերլուծություն.** Օգտագործում է արհեստական բանականության ալգորիթմներ՝ վերլուծելու ձայնի առանձնահատկությունները, ինչպիսիք են բարձրությունը, տոնայնությունը, տեմպը և ինտենսիվությունը՝ հայտնաբերելու զգացմունքները, ինչպիսիք են ուրախությունը, զայրույթը, տխրությունը և սթրեսը:<br>**Մշակում իրական ժամանակում**. տրամադրում է անմիջական արձագանք ձայնային հուզական ազդանշանների վերաբերյալ, երբ մասնակիցները խոսում են, ինչը հնարավորություն է տալիս դինամիկ վերլուծություն կատարել փորձերի ընթացքում:<br>**Տվյալների համապարփակ պատկերացումներ**. ֆիքսում է ձայնային ցուցանիշների լայն շրջանակ, ներառյալ էներգիան, խոսքի արագությունը և զգացմունքային տոնայնությունը, ինչը թույլ է տալիս խորը վերլուծել բանավոր հաղորդակցությունը:<br>**Ինտեգրում այլ կենսաչափական տվյալների հետ**. համատեղում է ձայնի վերլուծությունը այլ եղանակների հետ (օրինակ՝ GSR, աչքի հետագծում, դեմքի արտահայտություն)՝ մասնակիցների հուզական և ճանաչողական վիճակների ամբողջական պատկերացման համար:<br>**Օգտագործողի համար հարմար ինտերֆեյս**. ինտուիտիվ կարգավորման և տվյալների վիզուալացման գործիքներ, | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | որոնք հետազոտողների համար հեշտացնում են փորձերը կառավարելը և արդյունքները վերլուծելը:<br>**Կարգավորելի չափումներ**.<br>Հետազոտողները պետք է հնարավորություն ունենան հստակեցնելու, թե որ ձայնային հատկանիշների վրա է անհրաժեշտ կենտրոնանալ՝ վերլուծությունները համարեցնելով իրենց ուսումնասիրության կարիքներին:<br><br>Պետք է տրամադրվի **հաճախորդների աջակցության տարեկան ծրագրի փաթեթ**, որը թույլ է տալիս.<br><br>➢ Ստանալ կանոնավոր անհատական խորհրդատվության և վերապատրաստման համար<br>➢ Ծրագրային ապահովման շարունակական թարմացումներ, որոնք ներառում են նոր հնարավորություններ, թարմացումներ և վրիպակների շտկումներ<br>➢ հասանելիություն համակարգում ներառված ձեռնարկներին, ուղեցույցներին, տեխնիկական բնութագրերին և այլն,<br>➢ Հասանելիություն հետազոտության արդյունքների կարևորագույն կետերին՝ շուկայաբանության ուղղությամբ և սոցիալական մեդիայում:<br>**Առցանց օգնության կենտրոն**<br>Ուսումնական տեսանյութերի առկայություն: Օգնության կենտրոնը տրամադրում է ուղեցույցներ և ծրագրային ապահովման, և սարքավորումների համար:<br><br>***Ծրագրային ապահովման շարունակական թարմացումներ*** | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | *Մատակարարն ապահովում է ծրագրային ապահովման շարունակական թարմացումներ առնվազն 3 տարի, անվճար սկզբունքով՝ հետագա համագործակցության հնարավորությամբ:*<br><br>Մատակարարը պետք է իրականացնի սարքավորումների տեղադրում և գործարկում պատվիրատուի նշված տարածքում, սեմինար հանդիպումներ և տեղում ուսուցում առնվազն 2 օր, պատվիրատուի նշված տարածքում (սարքի մատակարարման հասցեով), որը իրականացնելու են մատակարար ընկերության մասնագետի կողմից, որը պարտադիր պետք է ունենա կենսաչափական հետազոտությունների մեծ փորձ:<br>Մատակարար ընկերությունը պետք է ներկայացնի առնվազն 2 հավաստագիր, որով կհավաստի տվյալ ոլորտում ունեցած փորձառությունը և ներդրված փորձը:<br><br>**Տեխնիկական աջակցության թիմ**<br>Մատակարարը պետք է ապահովի արագ արձագանքման ծառայություն, որը հասանելի կլինի 8 ժամ/օր:<br>Հնարավորություն տեխնիկական անսարքությունները վերացնել՝ էլ.փոստի, հեռախոսի և էկրանի համօգտագործման նիստերի միջոցով:<br>Երաշխիքային ժամկետ առնվազն 24 ամիս:<br><br>***-Ուշադրություն. գնային առաջարկը հարկավոր է ներկայացնել առանց ԱԱՀ-ի, քանի որ ապրանքը ձեռք է բերվում ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող ERASMUS+ LISS24 նախագծի շրջանակներում:*** | | | | | | | |

| | |
|---|---|
| Ընդամենը՝ | 11,270,000.00 |

* Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները:

**ԳՆՈՐԴ**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան»
հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«ԱՄԻՕ» բանկ
Հ/Հ 1150009677587528
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ ------------------------ Հ. Ջաքոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«iMotions» LLC
Քրիստեն Բերնիկովս Գադ 6, 4-րդ հարկ
Կոպենհագեն, Դանիա 1105,
Danske Bank
ՀՀ 4316108369
ՀՎՀՀ DK33504004

Գործադիր տնօրեն՝ ------------------------ Պ. Հարցբեկ
(ստորագրություն)
Կ.Տ.

iMotions A/S
Kristen Bernikows Gade 6, 4th
1105 Copenhagen K
Denmark
Phone: +45 71 998 098

*Հավելված N 2*
*«17» 11 2025 թ. կնքված*
*ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-25/104 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2) ենթակետի հիման վրա և վճարման ժամանակացույցը լրացվելու և կնքվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի և պայմանագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվելու են «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի հրապարակած փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ փաստացի կատարված աշխատանքի համար պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին:

Վճարման ենթակա գումարները ներկայացվելու են աճողական կարգով:

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Չ/մ | Ընդհանուր քանակը | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 33141174/503 | Բժշկական սարքերի հավաքածուներ | հատ | 1 | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |
| Ընդամենը՝ | | | | | | | | | | | | | | | | | % |

**ԳՆՈՐԴ**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան»
հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«ԱՄԻՕ» բանկ
Հ/Հ 1150009677587528
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ ---------------------------- Հ. Զաքոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«iMotions» LLC
Քրիստեն Բերնիկովս Գադ 6, 4-րդ հարկ
Կոպենհագեն, Դանիա 1105,
Danske Bank
ՀՀ 4316108369
ՀՎՀՀ DK33504004

Գործադիր տնօրեն՝ ---------------------------- Պ. Հարցբեկ
(ստորագրություն)
Կ.Տ.

iMotions A/S
Kristen Bernikows Gade 6, 4th
1105 Copenhagen K
Denmark
Phone: +45 71 998 098

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
НАЦИОНАЛЬНЫЙ АГРАРНЫЙ УНИВЕРСИТЕТ АРМЕНИИ
ARMENIAN NATIONAL AGRARIAN UNIVERSITY FOUNDATION RA
ՀՀ 01507028

*Հավելված N 3*
*«____» ________________ 2025 թ. կնքված*
*ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-25/104 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________________ | ______________________________ |
| ____________________________ | ______________________________ |
| գտնվելու վայրը _____________ | գտնվելու վայրը _______________ |
| հհ __________________________ | հհ_____________________________ |
| հվհհ ________________________ | հվհհ___________________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «              » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » «              » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ____________________________ | ____________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________________ | ____________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«____» ________________ 2025 թ. կնքված*
*ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-25/104 ծածկագրով պայմանագրի*

**ԱԿՏ N _**

**պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ________________
Գնորդի անվանումը Վաճառողի
անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ____________
պայմանագրի կնքման ամսաթիվը

պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«____» _________________ 2025 թ. կնքված*
*ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-25/104 ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

__________ֆինանսական գործակալի անվանումը________ հայտնում է, որ .

1. ________գնորդի անվանումը____-ի և __վաճառողի անվանումը_-ի միջև «--» 20 թ. կնքված «-------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և ______վաճառողի անվանումը_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

_______________________________________________

_____________

ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ.Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.